Հավելված
ՀՀ վարչապետի 2020 թ.
նոյեմբերի 5 -ի N 683- Ա
որոշման

«ԱՐՁԱԳԱՆՔ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԺԱՄԱՆԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ»
Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Նպաստել Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն ժամանած բնակչության կարիքներին արձագանքելու ջանքերին՝ տրամադրելով հումանիտար օգնություն սննդամթերքի տեսքով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով:
3.	Բարեգործը	Կարմիր Խաչի/Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիա
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Երևան և ՀՀ մարզեր, բնագավառը՝ հումանիտար օգնություն
6.	Ծրագրի բյուջեն	226,225,265 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն ժամանած 13600 կարիքավոր բնակչություն:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	13.10.2020 – 31.12.2020
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում ծավալվող գործողությունները լինելու են հետևյալ ուղղություններով՝ 1. Հումանիտար աջակցության տրամադրում Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն ժամանած սոցիալապես անապահով անձանց՝ ինչը ներառում է սննդային ապրանքների ձեռքբերում, տեսակավորում,

		փաթեթավորում, տեղափոխում և բաշխում (բյուջե՝ 219 105 000 դրամ, ժամանակահատված՝ 13.10.2020 թ -31.12.2020 թ.): 2. Ծրագրի կազմակերպական և պահպանման ծախսեր՝ 7,120,265 դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ և գործունեության համար անհրաժեշտ գրենական պիտույքների, կոմունալ և գրասենյակային սպասարկման ծառայությունների, ՀԿԽԸ անձնակազմի և կամավորների համար պաշտպանիչ միջոցների ձեռք բերում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիր՝ 1. Սննդամթերքի ձեռքբերում՝ 219,105,000 դրամ արժողությամբ 2. Բեռնատար մեքենաների վարձակալության և բեռնափոխադրման ծառայությունների ձեռքբերում ՝ 2,300,000 դրամ արժողությամբ 3. Բենզինի ձեռքբերում ՀԿԽԸ մեքենաների համար՝ 1,200,000 դրամ արժողությամբ: 4. Անձնակազմի և կամավորների համար շահառուների հետ հաղորդակցման հմտությունների ամրապնդման դասընթացների և վերապատրաստումների նպատակով մեթոդական նյութերի պատրաստման և դասընթացների իրականացման ծառայությունների ձեռքբերում՝ այդ թվում նաև հյուրանոցային ծառայությունների և սննդի ձեռքբերում՝ 800,000 դրամ արժողությամբ: 5. Գրենական պիտույքների և գրասենյակային սպասարկման ծառայությունների ձեռքբերում ՝ 920,000 դրամ արժողությամբ: 6. ՀԿԽԸ անձնակազմի և կամավորների համար պաշտպանիչ միջոցների (դիմակներ, ախտահանիչ նյութեր) ձեռք բերում՝ 280,000 դրամ արժողությամբ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի կազմակերպական և պահպանման ծախսեր՝ 7,120,265 դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ՝ 720,645 դրամ արժողությամբ և գործունեության համար անհրաժեշտ գրենական պիտույքների, կոմունալ և գրասենյակային սպասարկման ծառայությունների ձեռքբերում՝ 6,119,620 դրամ արժողությամբ և

		ՀԿԽԸ անձնակազմի և կամավորների համար պաշտպանիչ միջոցների ձեռք-բերում՝ 280,000 դրամ արժողությամբ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի շրջանակներում հաստատվելու է սերտ համագործակցություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների, մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տրամադրել հաշվետվություններ Կարմիր խաչի միջազգային ֆեդերացիային, ինչպես նաև կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր: Հայկական Կարմիր խաչի ընկերության Գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է գործունեության անմիջական վերահսկում: Նաև ՀՀ Կառավարության 2003 թ. հունվարի 16 N66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ